ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Վարկ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ (CQS)
Հետաքրքրվածության արտահայտման հրավեր

25 նոյեմբերի 2021թ.

Վարկի համարը՝ 3284-ARM (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր»
Առաջադրանքի անվանումը՝ Երևանի թիվ 45 հիմնական դպրոցի, ՀՀ Արագածոտնի մարզի Շենավանի միջնակարգ դպրոցի, ՀՀ Արագածոտնի մարզի Հնաբերդ միջնակարգ դպրոցի, ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոցի, ՀՀ Արարատի մարզի Հայանիստի միջնակարգ դպրոցի, ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի, ՀՀ Գեղարքունիքի մարզի Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցի, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի միջնակարգ դպրոցի և ՀՀ Վայոց Ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոցի շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն
Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ **AEX-11**
Վերջնաժամկետ՝ 2021թ. դեկտեմբերի 16-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը (այսուհետև՝ «Կառավարություն») ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիրը» (Ծրագիր) իրականացնելու նպատակով: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Ծրագրի իրականացնող գործակալությունն է և մտադիր է այդ վարկային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (Պատվիրատու) նշված Ծառայություններն իրականացնելու նպատակով հրավիրում է իրավասու խորհրդատվական կազմակերպություններին (Խորհրդատուներ) ներկայացնելու հետաքրքրվածության հայտեր: Ծրագրով նախատեսված ՀՀ մի շարք դպրոցների տեխնիկական վիճակի ուսումնասիրության համար կհատկացվեն ֆինանսական միջոցներ տեղական խորհրդատուներին՝ ստորև բերվող աշխատանքների կատարման նպատակով:

Խորհրդատու կազմակերպության գործունեության հիմնական շրջանակներն են՝

1. Հողամասում առկա բոլոր շենք-շինությունների (բացառությամբ ենթակայանները) ընդհանուր ակնադիտական հետազոտություն:
2. Շենք-շինությունների առանձին մասերի հետազոտություն (հիմքեր, ծածկեր, տանիք, կրող հիմնակմախք կամ պատեր և այլն):
3. Շենք-շինությունների առանձին կոնստրուկտիվ տարրերի ուսումնասիրություն (հեծաններ, ծածկի առանձին սալեր, սյուներ, առանձին պատեր, բացվածքներ, հավաքովի կոնստրուկցիաների հանգույցներ և այլն):
4. Բետոնների ամրություն գործիքային ստուգում,
5. Շենք-շինությունների վերակառուցման կամ քանդման տեխնիկատնտեսական հիմնավորում (ուժեղացում-քանդում, նորի կառուցում տարբերակների գնային համեմատական վերլուծություն) միայն այն դպրոցների համար, որոնք միանշանակ քանդման ենթակա չեն:
6. Յուրաքանչյուր հանձնարարվող ծրագրի առաջադրանքի մշակման և իրականացման ընթացքում համագործակցել Պատվիրատուի մասնագետների հետ և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ նախատեսվող հետազոտություններին ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ:
7. Պայմանագրի ժամկետի շրջանակներում մասնակցել Պատվիրատուի կամ այլ շահագրգիռ կազմակերպության կողմից հրավիրված խորհրդակցություններին և հանձնաժողովների աշխատանքներին:
8. Կազմակերպել շինհրապարակի այցելությունները ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի:
9. Աշխատանքների ընթացքում, բացի ՀՀ տարածքում գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերից, առաջնորդվել նաև Համաշխարային բանկի կողմից մշակված ուղեցույցով (կտրամադրվի պատվիրատուի կողմից):
10. Հետազոտության արդյունքում շենքերի վերակառուցմանը վերաբերվող առաջարկները պետք է ապահովեն սեյսմազինվածության <u>ուժեղացում</u> մակարդակը՝ համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերի:
11. *<u>ՀՀ Արմավիրի մարզի Մրգաշատի թիվ 1 միջնակարգ դպրոցի</u>* համար անհրաժեշտ է կատարել՝

- Քարե շարվածքից գլանի հորատում, տուֆի և կապակցող շաղախի փաստացի ամրության և խտության որոշման համար, առնվազն 6 տեղ,
- Շարվածքի առաձգականության մոդուլի որոշում, յուրաքանչյուր մասնաշենքում առնվազն 2 նմուշի հմար,
- Պատերի շարվածքում դատարկությունների որոշում ուլտրաձայնային մեթոդով, յուրաքանչյուր մասնաշենքում առնվազն 6 տեղ,
- Պատերի հատման հատվածում (անկյուններում) սվաղի շերտի հեռացում և շարվածքի ուսումնասիրություն, յուրաքանչյուր մասնաշենքում առնվազն 6 տեղ:

Խորհդատվական ծառայությունների մեկնարկը ակնկալվում է **2021 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում:** Խորհրդատուի հետ կկնքվի միանվագ վճարումներով պայմանագիր: Պայմանագրի տևողությունն է **50 օր:**

Խորհրդատուների կարճ ցուցակի կազմման չափանիշներն են՝

Վերջին 10 տարիների ընթացքում՝

- Ընդհանուր փորձառություն /կազմակերպության ստեղծման տարեթիվը, գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրություն և կատարված աշխատանքների ցանկ/,
- Քաղաքացիական շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրության իրականացման փորձ:

Հետաքրքրված խորհրդատու ընկերությունները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ (կազմակերպության կանոնադրությունն ու գրանցման վկայականը, հիմնական աշխատակազմի ցանկը, կազմակերպության ընդհանուր փորձառությունը և նախկինում կատարած նմանատիպ աշխատանքների ցանկը), որոնք կհավաստեն, որ կազմակերպությունը ունի պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար: Աշխատակազմի աշխատանքային ինքնակենսագրությունները (CV) պետք չի ներկայացնել տվյալ փուլում: Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Ասիական Զարգացման Բանկի «Խորհրդատուների օգտագործման ուղեցույցում» (մարտ, 2013թ., որը պարբերաբար լրամշակվում է) սահմանված «Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն» (CQS) ընթացակարգին համաձայն:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ կազմակերպությունների հետ համատեղ գործունեության ձևով կամ վարձելով ենթա-խորհրդատու՝ իրենց որակավորումները բարելավելու նպատակով:

Լրացուցիչ տեղեկություններ հնարավոր է ստանալ ստորև բերված հասցեում, ՀՏԶՀ-ի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 09:00-ից մինչև 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն գրավոր ձևով ստորև ներկայացված հասցեով (առձեռն կամ փոստով կամ էլ-փոստով) ոչ ուշ քան **2021թ. դեկտեմբերի 16-ը, ժամը 17:00**:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ,
ՀՀ, ք.Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31, ՀՏԶՀ գրասենյակ,
Գնումների բաժին, 406 սենյակ,
Հեռախոսը՝ (374 60) 50-15-60,
Էլ-փոստը՝ procurement@atdf.am: